Canon

Mini Photo Printer
Օգտվողի ձեռնարկ

Zoemini

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՊԻՉԻ ՄԱՍԻՆ

ՏՊԻՉԻ ՏԵՂԱԿԱՅՈՒՄԸ

A) Լիցքավորեք տպիչը

B) Միացումը

C) Թղթի բեռնումը

ՀԱՎԵԼՎԱԾԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ

ՍԱՐՔԻ և ՏՊԻՉԻ ՁՈՒԳԱՎՈՐՈՒՄԸ

ՕԳՏՎՈՂԻ ՄԻՋԵՐԵՍ

Գլխավոր էկրան / Հիմնական ընտրացանկ

Տեսախցիկի ռեժիմ

Լուսանկարների պատկերասրահ

Լուսանկարների տպումը

Լուսանկարների խմբագրում

Ինչպես օգտագործել Սալիկի տպում գործառույթը

Ինչպես օգտագործել Կոլաժային տպում գործառույթը

Լուսանկարների համօգտագործումը

Լուսանկարների պահումը

Mini Print-ին ուղարկումը

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԸՆԹԵՐՑԵՔ ՆԱԽՔԱՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԸ

Նախքան տպիչն օգտագործելը ընթերցեք հետևյալ հրահանգները և անվտանգության նախազգուշական միջոցները:

Կանոնակարգող և անվտանգության մասին լրացուցիչ տեղեկությունների համար անդրադարձեք Կանոնակարգումների և անվտանգության մասին տեղեկատվական թերթիկին, որը ներառված է տպիչի փաթեթի մեջ:

ՆՇԱՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Ցույց է տալիս տեղեկատվություն, որն անտեսելու դեպքում կարող է առաջանալ պատահական վնասվածք՝ սարքավորումը սխալ օգտագործելու հետևանքով: Այս տեղեկություններին հարկավոր է լավ ծանոթանալ՝ ապահով գործարկման համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հրահանգները կամ բովանդակությունը կարևոր են, և դրանց պետք է հետևել:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Մի օգտագործեք կամ թողեք սարքավորումն արևի անմիջական ճառագայթների տակ: Հեռու պահեք նաև այն տարածքներից, որտեղ ջերմաստիճանի կտրուկ փոփոխություններ են տեղի ունենում, բարձր խոնավության պայմաններ են, փոշոտ և աղտոտ են:
- Չափազանց բարձր կամ ցածր ջերմաստիճանի պայմաններում տպիչը կարող է չտպել: Նախքան նորից տպելու փորձ կատարելը՝ թողեք, որ տպիչի ջերմաստիճանը կարգաբերվի մինչև գործարկման համար խորհուրդ տրվող ջերմաստիճանը՝ 15º-ից 32ºC:
- Լիցքավորումը կատարեք խորհուրդ տրվող ջերմաստիճանային միջավայրում՝ 15º-ից 32ºC:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

- Ցածր խոնավության պայմաններում տպիչը կարող է պլանավորել ստատիկ էլեկտրական լիցքավորում: Ուշադիր եղեք տպիչի հետ գործ ունենալիս:
- Հեռու պահեք տպիչը հեղուկներից կամ հեղուկներով լի տարրաներից:
- Օդափոխման անցքերից հեռու պահեք բոլոր տեսակի առարկաները, որոնք կարող են արգելափակել օդի մուտքը:
- Ոչ մի պարագայում մի քանդեք տպիչը: Եթե սարքավորումը լավ չի աշխատում, դիմեք ձեր ներկայացուցչին, որտեղից գնել եք սարքավորումը կամ Canon-ի սպասարկման և աջակցման կենտրոնին՝ www.canon-europe.com/Support:
- Սարքավորումը օտարեք պատշաճ ձևով, քանի որ այն կարող է առաջացնել մարմնական վնասվածքներ կամ վնաս հասցնել: Սարքավորումը օտարելիս հետևեք տեղական կանոնակարգումներին:
- Մի գործածեք այն բժշկական էլեկտրական սարքավորումների կողքին: Սարքավորումն արձակում է թույլ մագնիսական ճառագայթներ: Մի դրեք այն փոխպատվաստված էլեկտրական սարքերի կողքին, ինչպես օրինակ՝ սրտի կարդիոստիմուլյատորը: Եթե տպիչը հանկարծակի հայտնվի նման սարքի կողքին, այցելեք ձեր բժշկին:
- Մարտկոցը քանդելու դեպքում կարող է առաջանալ հոսք, պայթյուն, վնասվածք կամ անձնական վնասվածք:
- Մի օգտագործեք տպիչը, եթե մարտկոցը կամ սարքավորումը ուռել է:
- Երբեք չպահեք մարտկոցը բարձր ջերմաստիճանի պայմաններում, անմիջապես տաքացուցիչի կողքին տակ կամ չօտարեք այրման միջոցով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՊԻՉԻ ՄԱՍԻՆ

ՓԱԹԵԹԻ ՀԵՏ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԱՐՐԵՐ



Mini Photo Printer



Արագ մեկնարկի ուղեցույց



USB մալուխ



Կանոնակարգումների և անվտանգության մասին տեղեկատվական թերթիկ



CANON ZINK™ լուսանկարների թուղթ (10 թերթ)

ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՈՒՅԹՆԵՐԸ



① Հոսանքի LED լույս



② Մնուցման կոճակ



③ Վերին կափարիչ



④ Թղթի արտածման դարակ



⑤ Վերակայման կոճակ

⑥ Լիցքավորման LED լույս



⑦ USB միացք
(լիցքավորման համար)

⑧ Թղթի դարակ
(երևում է, երբ վերին կափարիչը բաց է)



⑨ Ձեռքի ամրօղակ

ՍՆՈՒՑՈՒՄ ԵՎ ԼԻՑՔԱՎՈՐՈՒՄ - LED ցուցիչի լույսեր





ՍՆՈՒՑՈՒՄ

- ○ Սպիտակ - Տպիչը միացրած է
- ☼ Սպիտակ թարթող - Տպում է / Մշակում է / Հովանում է
- ☀ Կարմիր թարթող - Թուղթ չկա / Կափարիչը բաց է / Թուղթը խցանված է / Մարտկոցի լիցքը սպառվում է / պահեստը լիքն է / այլ սխալներ
- ● Կարմիր - Ներկառուցված ծրագիրը արդիացվում է

ԼԻՑՔԱՎՈՐՈՒՄ

- ● Կարմիր - Լիցքավորվում է
- ● Կանաչ - Լիցքավորումն ավարտվել է
- ☀ ↕ ☀ Կարմիրն ու կանաչը հերթով թարթում են - Լիցքավորման սխալ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

CANON MINI PRINTER-Ի ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

- Սարքավորումը մաքրեք փափուկ, չոր շորով: Մի մաքրեք խոնավ շորով կամ շուտ գոլորշիացող հեղուկներով, ինչպես օրինակ՝ ներկի նոսրացուցիչը:
- Փակ պահեք վերին կափարիչը, որպեսզի փոշի ու այլ մասնիկներ չընկնեն տպիչի ներսը:
- Տպիչն օգտագործեք և պահեք խորհուրդ տրվող միջավայրում՝ 15º-ից 32º C ջերմաստիճանային և 40-55% հարաբերական խոնավության պայմաններում:
- Արդիացված պահեք տպիչի ներկառուցված ծրագիրը: Եթե ցանկանում եք ստուգել արդյոք ներկառուցված ծրագիրը նորացման կարիք ունի, բացեք Canon Mini Print հավելվածը, անցեք Հիմնական ընտրացանկ > Տպիչի կարգավորումներ > Ընտրեք կապակցված տպիչը >, այնուհետև տոփեք «Ներկառուցված ծրագրի նորացում»:

  -- Նախքան ստուգելը համոզվեք, որ ձեր շարժական սարքը կապակցված է համացանցին: Ներկառուցված ծրագիրը նորացնելու/արդիացնելու համար տպիչը պետք է լիցքավորված լինի մինչև 50% կամ ավելի բարձր, կամ կապակցված լինի հոսանքի սնուցման աղբյուրին:
- Համոզվեք, որ Canon Mini Print հավելվածը արդիացված է վերջին տարբերակով: Եթե ձեր հավելվածներն ինքնաշխատորեն չեն արդիացվում, գնացեք հավելվածների խանութ և ստուգեք՝ արդյոք պետք է արդիացում:

ՏՊԻՉԻ ՏԵՂԱԿԱՅՈՒՄԸ

A) ԼԻՑՔԱՎՈՐԵՔ ՏՊԻՉԸ



Տպիչն ունի ներկառուցված մարտկոց: Նախքան տպիչն օգտագործելը ամբողջությամբ լիցքավորեք մարտկոցը փաթեթի հետ տրամադրված USB մալուխի միջոցով:

① Ձետեղեք հետը տրամադրված USB մալուխի փոքր ծայրը տպիչի մեջ, իսկ մյուս ծայրը՝ լիցքավորվող USB հարմարիչի մեջ:

② Լիցքավորման LED լույսը կվառվի կարմիր գույնով, ինչը ցույց է տալիս, որ այն լիցքավորվում է:

③ Ամբողջությամբ լիցքավորվելուց հետո LED լույսը կդառնա կանաչ:
-- Գործարկման ժամանակը կարող է տարբեր լինել՝ կախված մարտկոցի կարգավիճակից, գործարկման կարգավիճակից և միջավայրի պայմաններից:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մարտկոցի կարգավիճակի պատկերակ (ցուցադրվում է հավելվածում)

Տեղեկություններ USB մալուխի մասին

ՁԳՈՒՇՈՒԹՅԱՄԲ ՎԱՐՎԵՔ USB ՄԱԼՈՒԽԻ ՀԵՏ, ԵՐԲ ԼԻՑՔԱՎՈՐՈՒՄ ԵՔ

- Մի դրեք ծանր առարկաներ մալուխի վրա:
- Մի դրեք USB մալուխը տաքացուցիչի կողքին:
- Մի քերծեք, վնասեք, ոլորեք կամ ուժեղ մի ձգեք մալուխը:
- Մի միացրեք կամ անջատեք մալուխը հոսանքի վարդակից թաց ձեռքերով:
- Խուսափեք չափազանց բարձր/ցածր ջերմաստիճանային կամ խոնավության պայմաններից:
- Լիցքավորելուց հետո հանեք USB մալուխը հոսանքի աղբյուրից:
- Լիցքավորման համար օգտագործեք հետը տրամադրված USB մալուխը:

B) ՄԻԱՑՈՒՄԸ



① Սեղմեք և սեղմած պահեք Սնուցման կոճակը՝ (⏻) մինչև LED ցուցիչը վառվի:
-- LED ցուցիչը կսկսի թարթել, երբ տպիչը սկսի միանալ:

② Երբ LED ցուցիչը վառվի կայուն սպիտակ լույսով, ուրեմն տպիչը պատրաստ է տպելուն:

C) ԹՂԹԻ ԲԵՌՆՈՒՄԸ





① Հեռացրեք վերին կափարիչը՝ սահեցնելով այն առաջ՝ սլաքի ուղղությամբ:

② Բացեք լուսանկարների թղթի մեկ տոպրակ (10 թերթ + կապույտ SMART SHEET™-ը):



Կապույտ SMART SHEET™-ը պետք է լինի տակը, իսկ լուսանկարների թղթերը՝ վերևը:
Բոլոր պատկերանշանները պետք է լինեն դեպի ներքև:

③ Տեղադրեք բոլոր 10 թերթերը և մեկ SMART SHEET™-ը լուսանկարների թղթի դարակում:
-- Դարսեք լուսանկարների թղթերը կապույտ SMART SHEET™-ի վրայից և համոզվեք, որ կապույտ գծակոդը և լուսանկարների թղթերի պատկերանշանները դեպի ներքև են:

④ Նորից դրեք վերին կափարիչը տպիչի վրա: Ճիշտ փակելու դեպքում այն պետք է կտտոցով տեղը մտնի:
-- Մինչ առաջին անգամ տպելը՝ կապույտ SMART SHEET™-ը ավտոմատ կերպով կանցնի տպիչի միջով:

ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԹՈՒՂԹԸ

- Բեռնեք միայն 10 ZINK™ լուսանկարների թղթի թերթ և 1 SMART SHEET™: Մի բեռնեք ավելին, քանի որ դա կարող է թղթի խցանում կամ տպման սխալներ առաջացնել:
- Լավագույն արդյունքների համար օգտագործեք Canon Zoemini տպիչների համար նախատեսված ZINK™ լուսանկարների թուղթը:

  --Լրացուցիչ թուղթ կարող եք գնել Canon Mini Print հավելվածից՝ հիմնական ընտրացանկում տոփելով «Գնել թուղթ»:
- Թուղթը խցանվելու դեպքում պարզապես ԱՆՋԱՏԵՔ տպիչը և կրկին ՄԻԱՑՐԵՔ, որպեսզի խցանումն ավտոմատ կերպով բացվի: Մի փորձեք քաշելով հանել թուղթը:
- Տպելու ընթացքում մի ձգեք կամ քաշեք թուղթը:
- Զգուշությամբ վարվեք լուսանկարների թղթի հետ, որպեսզի հանկարծ չվնասեք կամ չծալեք այն:
- Բեռնելիս աշխատեք չաղտոտեք թուղթը: Եթե թուղթը աղտոտվի կամ վնասվի, կարող է խցանում կամ տպման սխալ առաջանալ:
- Մի բացեք թղթի նոր տոպրակ, եթե դեռ պատրաստ չեք բեռնելու այն տպիչի մեջ:
- Լուսանկարների թուղթը մի դրեք արևի անմիջական ճառագայթների տակ կամ խոնավ տեղ:
- Մի թողեք լուսանկարների թուղթը այնպիսի տարածքում, որտեղ ջերմաստիճանը կամ խոնավությունը չեն համապատասխանում տոպրակի վրա նշված պայմաններին: Դա կարող է անդրադառնալ տպված լուսանկարի որակի վրա:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ SMART SHEET™-Ի ՄԱՍԻՆ

- Լուսանկարների թղթի յուրաքանչյուր տոպրակը պարունակում է 10 թերթ լուսանկարների թուղթ և 1 կապույտ SMART SHEET™:
- Տպման լավագույն որակ ստանալու համար SMART SHEET™-ը և լուսանկարների թուղթը բեռնեք միևնույն տոպրակից: Յուրաքանչյուր SMART SHEET™ հատուկ նախատեսված է այն թղթի տոպրակի համար, որի մեջ այն գտնվում է:
- Նախքան առաջին անգամ տպելը՝ SMART SHEET™-ն ավտոմատ կերպով անցնում է տպիչի միջով՝ մաքրելով տպիչը և լավարկելով տպման որակը տվյալ տոպրակի թղթերի համար (10 թերթ):
- Պահպանեք SMART SHEET™-ը և դեն գցեք միայն տոպրակում առկա ամբողջ 10 թերթը տպելուց հետո: Եթե տպման որակը չի գոհացնում, կարող եք կրկին օգտագործել SMART SHEET™-ը, եթե թուղթը դեռ նույն տոպրակից է: Պարզապես սահեցրեք SMART SHEET™-ը մնացած թղթերի տակ՝ գծակոդի կողմը դեպի վար:
- Այլ տոպրակից SMART SHEET™ օգտագործելու դեպքում տպման որակը կարող է նվազել:

ՏԱՐԲԵՐԱԿ ①

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ ՈՐՈՆԵՔ «Canon Mini Print» ՀԱՎԵԼՎԱԾԸ

Android™ համակարգի համար - Google Play™-ից



iOS® համակարգի համար - App Store®-ից







ՏԱՐԲԵՐԱԿ ②

QR ԿՈԴԻ ՄԻՋՈՑՈՎ - ՍԿԱՆԱՎՈՐԵՔ QR ԿՈԴԸ «Արագ մեկնարկի ուղեցույցից»

Android-ի դեպքում

iOS-ի դեպքում



ՏԱՐԲԵՐԱԿ ③

Ձեր սարքի դիտարկիչում ԱՆՑԵՔ https://app.canonminiprint.com/ կայք

ՏԱՐԲԵՐԱԿ ④

NFC ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ Android համակարգում



ՇԱՐԺԱԿԱՆ ՍԱՐՔԻ և CANON MINI PRINTER-Ի ԶՈՒԳԱՎՈՐՈՒՄԸ

Զուգավորումը Android-ի հետ

① Միացրեք տպիչը՝ սեղմելով և սեղմած պահելով սնուցման կոճակը մինչև LED ցուցիչի լույսը վառվի:

② Բացեք շարժական սարքի «Կարգավորումներ» բաժինը, միացրեք Bluetooth-ը և զուգավորեք տպիչի հետ:



③ ՏԱՐԲԵՐԱԿ Ա - Ավելացրեք տպիչը հավելվածին: Տոփեք վերևի աջ անկյունի պատկերակի վրա և ընտրեք ձեր տպիչը: Կապակցվելու պահին պատկերակը կփոխվի՝ ցույց տալով մարտկոցի լիցքի մակարդակը:



③ ՏԱՐԲԵՐԱԿ Բ - Ավելացրեք տպիչը հավելվածին: Հիմնական ընտրացանկում անցեք «Տպիչի կարգավորումներ», տոփեք «Ավելացնել տպիչ» և ընտրեք ձեր տպիչը:

Ձեր տպիչը կհայտնվի «Տպիչներ» ցանկում, իսկ պատկերակը կփոխվի՝ ցույց տալով մարտկոցի լիցքի մակարդակը կապակցվելու պահին:



Զուգավորումը iOS-ի հետ

① Միացրեք տպիչը՝ սեղմելով և սեղմած պահելով սնուցման կոճակը մինչև LED ցուցիչի լույսը վառվի:

② Բացեք շարժական սարքի «Կարգավորումներ» բաժինը, միացրեք Bluetooth-ը և զուգավորեք տպիչի հետ:



③ ՏԱՐԲԵՐԱԿ Ա - Ավելացրեք տպիչը հավելվածին: Տոփեք վերևի աջ անկյունի պատկերակի վրա և ընտրեք ձեր տպիչը: Կապակցվելու պահին պատկերակը կփոխվի՝ ցույց տալով մարտկոցի լիցքի մակարդակը:



———ԿԱՄ———

③ ՏԱՐԲԵՐԱԿ Բ - Ավելացրեք տպիչը հավելվածին: Հիմնական ընտրացանկում անցեք «Տպիչի կարգավորումներ», տոփեք «Ավելացնել տպիչ» և ընտրեք ձեր տպիչը:

Ձեր տպիչը կհայտնվի «Տպիչներ» ցանկում, իսկ պատկերակը կփոխվի՝ ցույց տալով մարտկոցի լիցքի մակարդակը կապակցվելու պահին:



Զուգավորումը Android-ի հետ (NFC գործառույթով)

① Շարժական սարքի վրա ստուգեք, որպեսզի NFC գործառույթը և Bluetooth-ը միացրած լինեն:

② Բացեք Canon Mini Print հավելվածը:

③ Տեղադրեք շարժական սարքը տպիչի վրա:

④ Տպիչն ինքնաշխատորեն կզուգավորվի շարժական սարքի հետ:



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տպիչի կարգավիճակի պատկերակ (ցուցադրվում է հավելվածում)

Ավելացնել նոր տպիչ

Տպիչը կապակցված չէ

Տպիչը կապակցված է (մարտկոցի կարգավիճակը ցուցադրվում է)

Տեղեկություններ զուգավորման մասին

- Մեկ տպիչը կարող է զուգավորվել միայն մեկ iOS/Android սարքի հետ:
- Մեկ iOS/Android սարքը կարող է կապակցվել մի քանի տպիչի հետ:

  Լրացուցիչ տպիչ զուգավորելու համար Հիմնական ընտրացանկում անցեք Տպիչի կարգավորումներ և տոփեք «Ավելացնել տպիչ»
- Որոնեք և զուգավորեք «Canon Mini Printer (xx:xx) անունով տպիչը»: Տպիչի ներսում գտնվող պիտակի վրայի MACnumber-ի (xx:xx) վերջին 4 թվանշանը պետք է համընկնի:
- Bluetooth-ով որոնումը և փոխանցումը կարող է չհաջողվել կախված միջավայրից: Շարժական սարքի վրա ստուգեք Bluetooth-ի վիճակը և փորձեք նորից:





ՕԳՏՎՈՂԻ ՄԻՋԵՐԵՍ

ԳԼԽԱՎՈՐ ԷԿՐԱՆ



Հիմնական ընտրացանկ

Տպիչի կարգավիճակ

Լուսանկարների պատկերասրահ

Տեսախցիկի ռեժիմ

Առցանց ալբոմներ[1]

Facebook

Instagram

Google Drive

Dropbox

iCloud (միայն iOS)

ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆՏՐԱՑԱՆԿ



Հավելվածի մեջ ստացվող հաղորդագրությունների դիտում

Մուտքի իրավունք զուգավորված տպիչի տեղեկություններին և կարգավորումներին

Տպման հերթագրման մեջ առկա պատկերների դիտում և ջնջում

Մուտքի իրավունք հավելվածի տեղեկություններին և կարգավորումներին

Առցանց օգտվողի ձեռնարկի և Հաճախակի տրվող հարցերի դիտում

Լուսանկարների թղթի գնում առցանց խանութից

Հավելվածի տարբերակի ստուգում, ծանոթացում Օգտվողի համաձայնագրին և Գաղտնիության դրույթին

Կախված ձեր սարքից և տարածաշրջանից՝ հավելվածի աշխատանքը, գործառույթները և հասանելի Առցանց ալբոմները կարող են տարբեր լինել:

1) Պահանջվում է կապակցում համացանցին: Օգտագործելու համար պահանջվում են սոցիալական ցանցերի կամ Ամպի ընթացիկ հաշիվ(ներ):

ՏԵՍԱԽՑԻԿԻ ՌԵԺԻՄ

① Լուսանկարելու համար Գլխավոր էկրանին տոփեք [ ]:
(Ընտրովի. էֆեկտներով լուսանկարներ նկարելու համար տոփեք ստորև պատկերակները:)

② Լուսանկարը նկարելուց հետո կարող եք տպել, խմբագրել, համօգտագործել կամ պահել:

③ Տպելու համար տոփեք [ ]:



* Պատկերում պետք է նշվի դեմքի ճանաչումը

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

Լուսանկարների պատկերասրահում կարող եք զննարկել լուսանկարները պատկերասրահի տեսքում, ըստ պանակների կամ ըստ օրացույցի:

① Լուսանկարների պատկերասրահը դիտելու համար Գլխավոր էկրանին տոփեք [ ]:

② Լուսանկարը ընտրելուց հետո կարող եք տպել, խմբագրել, համօգտագործել կամ պահել:

③ Տպելու համար տոփեք [ ]:





Բոլոր լուսանկարները - Պատկերասրահ



Պանակի տեսք



Օրացույցի տեսք

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՏՊՈՒՄԸ



① Երբ ամեն ինչ պատրաստ լինի, տոփեք [ ]՝ ձեր լուսանկարը տպելու համար:

Համոզվեք, որ տպիչը միացրած է և զուգավորված/կապակցված:

② Կբացվի ընթացքը ցույց տվող էկրանը, ինչը կնշանակի, որ պատկերը ուղարկվում է տպիչ և տպվում է:

Հոսանքի LED լույսը կթարթի սպիտակ գույնի լույսով, դուրս չգաք կամ չփակեք հավելվածը մինչև տպման գործընթացն ավարտվի:

Ծանոթագրություն Տպման հերթագրման մասին. *Եթե տպիչը միացրած և կապակցված չէ, երբ ուղարկում եք տպելու, պատկերը կպահեստավորվի Տպման հերթագրման մեջ: Տպման գործընթացը սկսելու համար պարզապես միացրեք տպիչը և կրկին կապակցեք. էկրանին կցուցադրվի հարց այն մասին՝ արդյոք ուզում եք տպել հերթագրված պատկերները: Հերթագրված պատկերները դիտելու կամ ջնջելու համար անցեք Հիմնական ընտրացանկ > Տպման հերթագրում:*



Ուղարկվում է տպիչ

Տպվում է

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Տպված պատկերը կարող է տարբերվել բնօրինակ պատկերից, քանի որ «էկրանի տեխնոլոգիան», որն օգտագործվում է գույնը շարժական սարքի վրա արտապատկերելու համար, տարբերվում է «տպման տեխնոլոգիայից», որն օգտագործվում է գույնը թղթի վրա արտապատկերելու համար (ջերմային փոխանցմամբ տպում):
- Տպելու ընթացքում կամ խցանման դեպքում թուղթը չքաշեք:
- Մի բացեք վերին կափարիչը տպելու ընթացքում: Դա կարող է ազդել տպման որակի վրա:
- Եթե տպիչը ենթարկվի վիբրացիայի կամ ցնցվի, դա նույնպես կարող է ազդել լուսանկարի տպման որակի վրա:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ԽՄԲԱԳՐՈՒՄ

Պատկերը կարող եք հարմարեցնել խմբագրումների միջոցով, ինչպես օրինակ՝ զտիչները, կպչուկները, տեքստը և այլ էֆեկտներ:

① Տոփեք էկրանի ներքևի մասում գտնվող պատկերակները

② Հարմարեցրեք ինչպես կամենում եք:

③ Նախքան այդ էկրանից դուրս գալը՝ չմոռանաք պահել, համօգտագործել կամ տպել ձեր փոփոխությունները:



* Պատկերում պետք է նշվի դեմքի ճանաչումը:

ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՍԱԼԻԿԻ ՏՊՈՒՄ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

Սալիկի տպում գործառույթի միջոցով կարող եք մեկ լուսանկարը տպել մի քանի թերթի վրա, ինչը հնարավորություն կտա տպել սալիկներից բաղկացած, ավելի մեծ պատկեր:

① Երբ ամեն ինչ պատրաստ լինի, տոփեք [ ] և տոփեք 2 x 2 կամ 3 x 3 տպման սալիկների ընտրության վրա: *(Կցուցադրվեն գծեր, որոնք ցույց կտան, թե ինչպես է ձեր պատկերը տրոհվելու:)*

② Սալիկները տպելու համար տոփեք [ ], այնուհետև համատեղեք դրանք՝ ստեղծելով սալիկներից բաղկացած ավելի մեծ չափի պատկեր:





SMART SHEET, ZINK Technology և ZINK ապրանքանիշերը հանդիսանում են ZINK Holdings LLC-ի սեփականությունը: Օգտագործվում են լիցենզիայի հիման վրա: Apple-ը, Apple-ի պատկերանշանը, iPad-ը, iPad Air-ը, iPad Pro-ն և iPhone-ը հանդիսանում են Միացյալ Նահանգներում և այլ երկրներում գրանցված Apple Inc.-ի ապրանքանիշերը: App Store-ը հանդիսանում է Apple Inc.-ի ծառայության նշանը: iOS-ը հանդիսանում է Միացյալ Նահանգներում և այլ երկրներում գրանցված Cisco ընկերության ապրանքանիշը կամ գրանցված ապրանքանիշը և օգտագործվում է լիցենզիայի հիման վրա: Android-ը, Google Play-ը և Google Play-ի պատկերանշանը հանդիսանում են Google LLC-ի ապրանքանիշերը: Bluetooth-ը հանդիսանում է Bluetooth SIG-ի գրանցված ապրանքանիշը: Wi-Fi-ը հանդիսանում է Wi-Fi Alliance-ի գրանցված ապրանքանիշը: Մնացած բոլոր երրորդ կողմերի արտադրանքների անունները, բրենդների անունները և պատկերանշանները հանդիսանում են իրենց համապատասխան սեփականատերերի ապրանքանիշերը:

ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԿՈԼԱԺԱՅԻՆ ՏՊՈՒՄ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

Կոլաժային տպում գործառույթի միջոցով կարող եք տպել մինչև 4 լուսանկար՝ մեկ 2x3 չափի թերթի վրա:

① Բացեք ձեր լուսանկարները Լուսանկարների պատկերասրահից կամ Առցանց ալբոմներից

② Կոլաժային ձևանմուշների ընտրությունը տեսնելու համար տոփեք [ ] և ընտրեք որը ցանկանում եք (կարող եք ընտրել ձևանմուշում առկա 2, 3 կամ 4 լուսանկար)

③ Նշեք անհրաժեշտ քանակությամբ լուսանկարներ և տոփեք «Ընտրված»

④ Կարգաբերեք կոլաժի պատկերները ըստ ձեր ցանկության, ապա տոփեք [ ] կամ համօգտագործել/պահել:



ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՀԱՄՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Դուք կարող եք հեշտությամբ համօգտագործել կամ պահել ձեր պատկերները և փոփոխությունները:

① Երբ ամեն ինչ պատրաստ լինի, տոփեք [ ]՝ ձեր սարքի ընտրանքները բացելու համար

② Համօգտագործեք նշված հավելվածի հետ կամ պահեք ձեր սարքի լուսանկարների պահեստում:

Android



iOS



ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՊԱՀՈՒՄԸ

Ձեր պատկերները կարող եք պահել հավելվածի Canon պանակում:

① Երբ ամեն ինչ պատրաստ լինի, տոփեք [↓]՝ ձեր պատկերը պահելու համար:

② Պահված պատկերները դիտելու համար տոփեք [ ], այնուհետև տոփեք «Պանակ», ապա «Տեղային - Canon»



① Հավելվածի Canon պանակից լուսանկար ջնջելու համար տոփեք [ ] և կբացվի Լուսանկարների պատկերասրահը

② Տոփեք «Պանակ», այնուհետև «Տեղային - Canon»

③ Տոփեք աղբամանի պատկերակը, ապա ընտրեք լուսանկար(ներ)ը, որոնք ցանկանում եք մշտապես ջնջել:





MINI PRINT-ԻՆ ՈՒՂԱՐԿՈՒՄԸ

Ուղարկեք որևէ լուսանկար ձեր սարքի լուսանկարների պատկերասրահից կամ տեսախցիկով նկարահանած կատալոգից Canon Mini Print հավելված:

Android-ի դեպքում

① Ձեր սարքի պատկերասրահից ընտրեք որևէ նկար և տոփեք համօգտագործել կոճակը

② Տոփեք Mini Print պատկերակը, որպեսզի լուսանկարն ուղարկվի հավելված և դուք կարողանաք փոփոխել այն և տպել:



iOS-ի դեպքում

① Ձեր սարքի պատկերասրահից ընտրեք որևէ նկար և տոփեք համօգտագործել կոճակը

② ՏԱՐԲԵՐԱԿ Ա - Տոփեք «Բացել Mini Print-ով», որպեսզի լուսանկարն ուղարկվի հավելվածի խմբագրման էկրան, որտեղ դուք կարող եք փոփոխել այն և տպել:

② ՏԱՐԲԵՐԱԿ Բ - Տոփեք «Տպել Canon-ով», որպեսզի լուսանկարն ուղարկվի անմիջապես տպման հերթագրում:



Խմբագրման էկրան

Տպման հերթագրում

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

Սնուցման աղբյուր	Ներքին վերալիցքավորվող մարտկոց 500 մԱ/ժ լիթիում-պոլիմերային 7,4 Վ	
Լիցքավորման արագությունը	Մոտավորապես 90 րոպե (Լրիվ լիցքավորվելու համար)	
Չափերը	118,3 մմ (Ե) x 82,4 մմ (Լ) x 18,7 մմ (Բ)	
Քաշը	160 գ	
Կապակցելիությունը	Bluetooth 4.0	
Համատեղելի ԳՀ	iOS 9.0 կամ ավելի նոր տարբերակ և Android 4.4 կամ ավելի նոր տարբերակ	
Տպման տեխնոլոգիան	ZINK™	
Տպման տարլուծումը	314 x 400 dpi (կետերի քանակը մեկ դյույմում)	
Տպում առանց սահմանագծերի	Այո	
Համատեղելի թղթի տեսակները	Canon ZINK™ լուսանկարների թուղթ. 2" x 3" / Ինքնակպչուն հետնամասով / Չյուղոտվող / Ջրակայուն և չպատռվող	ZP-2030-20 (20 թերթ) ZP-2030-50 (50 թերթ)
Թղթի տարողունակությունը	Մինչև 10 թերթ ZINK™ լուսանկարների թուղթ + 1 SMART SHEET™	
Հիշողությունը	512 Մբ	
Շրջակա միջավայրի հարաչափերը	• Տպիչի համար խորհուրդ տրվող գործարկման, լիցքավորման և պահեստավորման ջերմաստիճանը. 15º - 32º C • Տպիչի համար խորհուրդ տրվող գործարկման, լիցքավորման և պահեստավորման խոնավությունը. 40-55% RH • Գործարկման ջերմաստիճանը. 5º - 40ºC • Գործարկման խոնավությունը. <70% RH	
Ինքնաշխատ անջատում	Ոչ մի / 3 րոպե / 5 րոպե / 10 րոպե (կարող եք ընտրել հավելվածից)	
Հոսանքի հարմարիչ	Ելքային հոսանք. 1 Ա (նվազ.)	Լարումը. 5 Վ

* Ենթակա է փոփոխման առանց ծանուցման

Canon Zoemini Mini Photo Printer

Արտադրման երկիրը. Տեսեք փաթեթավորման տուփի վրա:
Արտադրության ամսաթիվը. Սարքավորման արտադրման ամսաթիվը տպագրված է փաթեթավորման տուփի վրա:
Ներմուծողը Հայաստանում. Կոնտակտային տվյալները նշված են փաթեթավորման տուփի վրա:
Խնդրում ենք պահել ապահով տեղում:

Ապրանքի ոչնչացում
Այս ապրանքը պետք է ոչնչացվի պատշաճ ձևով՝ համաձայն Ձեր ազգային և տեղական օրենսդրության:

EAC

CANON INC.
30-2 Shimomaruko 3-chome, Ohta-ku, Tokyo 146-8501, Ճապոնիա

ООО «Канон Ру»
Серебряническая набережная, 29, 8-й этаж, бизнес-центр «Серебряный город»,
Москва, 109028, Россия

CEL-SX4WA2J0